կերակրելուց յետոյ, գործնական որեւէ քայլ չեն անում, մանաւանդ որ շուտով մեռնում է եւ Իսրայէլ Օրին, Հայաստանի ազատագրութեան ոգին եւ օտար արքունիքների հետ բանակցութիւններ վարողը:

Նրա մահից յետոյ՝ իր գործակիցները միառ ժամանակ եւս շարունակում են իրենց որոնումները օտար պետութիւնների մօտ, ըստ էութեան Ռուսաստանում, մինչեւ որ վերջնականապէս օտարներից յուսահատուելով, ձեռնթափ են լինում:

Այնուհետեւ Դաւիթ Բէգով սկսւում է մի նոր շրջան եւ նոր ուղղութիւն մեր ազատագրութեան պատմութեան մէջ: Գործի ծանրութեան կենտրոնը դրսից փոխադրւում է ներսը, դէպի երկիր եւ մի կողմ են շպրտւում դիւանագիտական փնտռտուքները: Հայ ժողովուրդը այժմ յոյսը իր վրայ դրած եւ դէնքի ու իր բազկի ոյժին ապաւինած, ընդվզումի եւ կռուի մէջ է որոնում իր ազատութիւնը: Թէպէտ այն էլ պիտի մատնանշել, որ նոյն արեւելեան Հայաստանի մէկ ուրիշ մասում, Ղարաբաղում, հայ մելիքներ, դեռ եւս շարունակում էին իրենց բանակցութիւնները ռուսների հետ, յոյսերնին նրանց վրայ դրած:

Եւ չորս տարուան հերոսամարտից ու անդուլ ջանքերից յետոյ՝ Դաւիթ Բէգին յաջողւում է փշրել Թշնամի պարսիկներին եւ դուրս քշել իր հայրենիքից: Հայաստանի ազատագրուած մէկ հողամասի վրայ ծածանւում է Հայաստանի անկախութեան դրօշակը, որի հովանու տակ բազմատանջ հայ ժողովուրդը մի կարճ ժամանակով ազատութիւն եւ հանգիստ է ճաշակում:

Բայց ճակատագիրը այլ կերպ էր տնօրինել: Պարսիկներին յաջորդում են տաճիկները, անհամեմատ աւելի զօրեղ եւ աւելի լաւ կազմակերպուած, քան իրենց հաւատակիցները: Անհաւասար կռուի մէջ հայերը պարտւում են. տաճիկները յաղթանակում են եւ մեր մանուկ ազատութիւնը մեռնում է:

Ճիշդ է, տաճիկների տիրապետութիւնն էլ երկար չի տեւում մեր այդ հողամասի վրայ: Նադիր Շահի օրով պարսիկները կրկին զօրեղանալով, վերադրաւում են իրենց նախկին երկիրները, բայց Հայաստանի անկախութիւնը արդէն վերացած էր*):

ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ԳԱՂԱՓԱՐԻ ՎԵՐԱԿԵՆԴԱՆԱՑՈՒՄԸ

Դաւիթ Բէգեանների — այսպէս ենք անուանում, որովհետեւ Դաւիթ Բէգի մահից յետոյ՝ նրա զինակիցները մի առ ժամանակ շարունակեցին նրա գործը — պարտութիւնից եւ Ղարաբաղի մելիքների վերջնական յուսախաբութիւնից յետոյ՝ Հայաստանի անկախութեան յոյսը ժամանակաւորապէս աղօտանում է, բայց չի մեռնում: Նա կրկին շարունակում է ապրել հայ ժողովրդի հոգում, թէեւ նման մոխիրների տակ թաղնուած կայծին, որի գոյութիւնը ոչ ոք չի նկատում, սակայն մի չունչ կամ մի բարեպատեհ հանգամանք միայն բաւական են, որ նա կրկին բոցավառուի եւ հրդեհի լուսով աշխարհ լուսաւորի:

Նա չէր կարող մեռնել ամենից առաջ այն պարզ պատճառով, որ նրան ծնող գլխաւոր աղբիւրը՝ հայ ժողովրդի թշուառ դրութիւնը, դեռ շարունակում էր մնալ նոյնը, եթէ ոչ աւելի վատթար, որ հրամայողաբար ազատութիւն էր պահանջում:

Երկրորդ՝ արդէն մի քանի սերունդներ էին դաստիարակուած ազատութեան ոգով, նրա համար երկար տառապել ու զոհաբերել, իսկ ժողովրդի առածի պէս՝ ինչ որ կաթի հետ է մտել, միայն հոգու հետ միասին կարող է դուրս գալ:

Եւ վերջապէս երրորդ՝ մենք ունէինք զօրեղ մարտական կազմակերպութիւններ ու մարտիկներ, որոնք բազմաթիւ անգամներ ցոյց էին տուել իրենց զէնքի յաջողութիւնը — թէ՛ ազատագրական կռիւների ընթացքում՝ ընդդէմ պարսիկների ու տաճիկների, թէ՛ լեռնականների յաճախակի արշաւանքների ժամանակ: Ճիշդ է, այդ մարտական ուժերը թէեւ այժմ ցրուած ու ծծուած էին ժողովրդի մէջ, սակայն մոռանալ չէին կարող իրենց զէնքի փառքը: Մի տեսակ դարան մտած, բայց կազմ ու պատրաստ, նրանք անհամբեր սպասում էին

---

*) Զամչեան՝ Հ. Պատմ.» Գ., Լէօ՝ «Հայկ. Տպագր.» Բ., պրոֆ. Թումայեան՝ «Պատմ. Արեւել. Խնդ.» Ա.